

3865




d

1

2

~~2406a~~

~~2487~~ ~~5511.~~



Ա. Ե. ԺԵՐՈԳԻԱՆ ՅԱՎԱՐԴԻ
ԴՐԱՄԻ ԴՐԱՄԻ ՅԱՎԱՐԴԻ
Մ Ե Կ Ա Կ Ե Ց

Ե Մանուէլ Ճայրագոյն Ա պարտապետէ
և Յաջորդէ Նոհանգին Պ աշխատ :

Հրամանաւ Քնապսակ Սրբազնա-
կատար Կաթուղիկոսի ամենայն Հայ-
ոց, և Ծայրագոյն Հայրապետի
լուսանկար Սրբոյ Գաահին Խ աջմիածնի
Տեառն ԵՓԲԵՄՎԱՅ Ռազնոյ :

Յաջնորդութեան Տեառն Յօհաննու
առաջելապատիւ Սրբազնի Ա ռաջեպիւխ-
ուոյն Արքմեանց Առանուագունէայց :

Վ Ե Ա Կ Ե Ց

Ե Մասկուլ .

Ե Տպարտիւ Օգոստէայ Սըմենիուց :

Catharine

ՀԱՅՈՑ ՊԵՏԱԿԱՆ ԱՆՎԻ

Հարկաւոր գիտելեաց վասն վարժա-
րանի մանկանց :



Դասը : Եղբայր սիրելին շատ փա-
փաք ունիմ քո հրամանոցմէն լսէլու-
թէ յաշխարքիս մէջն ինչ աղէկ բան
կայ , որ մեզի պատճառ լինի աղէկ
ապրվելու , և աղէկ անունով մարդ
ըլլալու :

Այս ուրախ եմ եղ-
բայր , որ քու հրամանքդ այս բարի
միտքն մտածելով ինձանէ հարցմունք
կընէս . Անձ տայ՝ որ սիրով լսես ,
միտքդ պահես , և ուրիշ եղբարնե-
րուսաւ սորվեցնես . որ Վրիստոսի
տոհած երանուն արժանի լինիս :

Դ : Յօս ունիմ յնձ , որ կը սոր-

վիմ, և այլ եղբարցս օդտակար կը
լինիմ. խնդրեմ որ աշխատանքդ չի
խնայես, լաւ խմացնես խնձի՝ թէյա
խարքիս մէջն ինչ աղեկ բան կայ՝
մեզ աղեկ ապրեցնելու, և աղեկ
անունով մարդ ընելու :

Պ: Ամէնէն շատ հարկաւոր աղեկ
բան մարդոյս լաւ լինելոյն՝ Ե՛ռւղղա-
փառ քրիստոնէութ բարի կըթուն
ուսումն. որ ասով՝ որպէս թէ երկու
գօրաւոր թեով՝ մարդս արծիւ-
թունոյ պէս կը բարձրանայ յերկինս,
Ա՛յ անքննին խորոցն խորհրդակից կը
լինի, ամենայն բարունցն և փառացն
ընկեր և օրթախի նման՝ յաշխարքի
մէջ հաւատարմունի և պատիւ կու-
նենայ :

Հ: Յ նորհակալ եմ եղբայր, որ այդ-
պէս ֆայտալը լաւ բան գտվելէն խնձի
խմացում տիմիր, և իմ սիրտս բաղձա-
նօք ղայրէթի վերայ հանեցիր. ու-

ըեմն խնդրեմ խմացնես ինձ՝ թէ այդ
երկու լաւ բանն, այսինքն՝ ուղղա-
փառ քրիստոնէութիւն՝ և բարի
կրթութիւն՝ ուր տեղ՝ և որո՞ն մօտ
կարեմ գտանել, որ առնեմ՝ և ու-
նենամ:

Պ: Երկու անգին հարկաւոր
բանից տեղի, գանձարան, շտեմարան,
անպար, կրպակ կամ խանութ՝ մեր
պատվելի խոհեմ և բարեպաշտ հայ-
րերուս այս մեր քաղաքին մէջ շինել
տված զարժարանն է. որ ամէնքս ա-
ռանց մէծ աշխատուե՛ մօտիկ տեղ
շուտով կարենք գտանել, և լինիլ
բարի անունով լաւ մարդ՝ շնորհօքն
Ը:

Հ: Աերելի՛ եղբայր. Ես կը տե-
սանեմ, որ շուկայն, կամ չարսըն գնա-
ցողներն՝ թէպէտ խանութներն շատ
լաւ բաներ աչքով կը տեսնեն, բայց
որն որ փողունի՝ իւր ուղածն կաւուե-

և տուն կը բերէ. ով որ փող չունի՝
պարապ տուն կու դայ : Հրամանքդէ
ասացիր՝ թէ վարժարանն խանութէ է.
այդ խանութի տիրոջն, ես տղայ եմ՝
փող չունիմ, ինչ պիտի տամ, որ իմ
ուզած լաւ բաներս առնեմ, և ես լաւ
մարդ ըլլամ :

Պ: Աիրական եղբայր: Հաւ ասա-
ցեր թէ տղայ եմ: շխտակ քանի որ մենք
տղայ եմք՝ մեր խելքերն շուտով այս
պէս խրատներու՝ առակի՝ և օրինակի
չի հասնիր. ապա քիչ քիչ սորվելով՝
աստուծով ամէն բանին տեղեակ կը^{լինիմք} : Ես որ ասացի թէ վարժա-
րանն մեզի խանութէ է, այն տեղն ես
ասի՝ թէ մեր պատվելի խոհեմ հայ-
րերուս շինածն է. ահայտնի եղաւ
որ մերն է. մեզնէ փող ուզօղ չի կայ-
հապա մինակ մեր հօրերուս և մօրե-
րուս անօդտակար զարարսըզ սէրմիա-
յովն թէ մենք ուզենք՝ շատ մեծ

օդտակար քեար կանեմք , հէմ մեզի՝
ու հէմ մեր ծնօղըներուն :

Հ: Կաղացեմ եղբայր այս ինչը լաւ
բան ասացիր՝ թէ հօրերուս և մօրե-
րուս անօդտակար զարարսըզ սէրմա-
յովն թէ մենք ուղենք՝ շատ օդտա-
կար քեար կանեմք : Այդ ի՞նչպէս
սէրմայեայ է . ինձ սորվեցնես , որ
խելքս հասնի :

Պ: Խմ ասացեալ սէրմայէն՝ մեր
տղայուն վեց տարեկան կեանքէն
մինչև ՚ի տասն և հինգ տարին է . որ
այդ ժամանակի կեանքներս ամենեին
մեր ծնողաց մէկ օդուտ չունին՝ զա-
րարէն պաշխայ . թէ մեր ծնօղըն
որբան աղքատ ևս լինին , մենք մին-
չև տասնեհինգ տարեկան չի լինիմք՝
չեմք կարեր մեր ծնողացէն մեր
ուտելիք հագնելիքի խարձն ծանրութն
վերցնել . ահա եղաւ որ՝ նոցա Փայ-
տասըզ ժամանակներովս թէ դպրա-

տուն գնամք՝ կարդալ դրել սոր-
վիմք, յետոյ՝ թէ մեզ՝ և թէ ծնո-
ղաց մերոց շատ օգուտ և քեար կա-
նեմք :

Հ. Ա' Ե' կ' թէ մեր հօրերէն՝ և
թէ այլ ուրիշ զէնկին խելօք աղայ
մարդիկներէն միշտ կը լսեմք, թէ
քեար ասածն՝ փողի շատութենով կը
լինի. եթէ աղքատ տղայք հօրերէն
վսստակած փող չունենան՝ մենակ
շունչ կամ նէֆէսի կարդալով՝ և
ձերքի դրելովն ինչ քեար կարեն
անել, որ վերջն լաւ ապրվին :

Պ. Ե' ղբայր, այս հարցմունքդ՝ շատ
երեխայ ջահիլ տղայի հարցմունք
եր՝ որ այս ուսումնասէր եղբարնե-
րուս մէջն արարերս Ի՞նչ տեսանեմ
որ դու ալ շատ մեղաւոր չես. հա-
պա՝ այն քու տեսած զէնկին՝ խելօք
աղայ մարդիկներն են մեղաւորք. որ
լաւ դիտեն թէ՝ շաքարն՝ մեղըն

Քաղցր անուշ է, սակայն՝ իրենց տունն
հազիր չունենալով՝ երբ երեխաներն
կուլան՝ շաքար կամ մեղր կուղեն,
տղոցն խաքելու համար կասեն. ի՞նչ
պէտք է մեղրն՝ կամ շաքարն, որ ան
համ՝ լեղի՝ և վնասակար զարար է
ուտողին :

Հ: Դամ միտքս չի հասկացաւ այդ
ասած օրինակդ. շաքարն՝ մեղրն՝ աղ-
քատին տանն չի գտվիր. զէնկինին
տանն ամբինչ գտվելն կարելի է. ինչի՞
հայրն սուտ խրատ պիտիր տայ տղային.
որ սուրբ աւետարանն կը հրամայէ
թէ՝ չի կայ այնպէս հայր՝ որ որդին
հաց ուզած ժամանակին՝ քար տայ.
կամ ձուկն ուզած վախտին՝ օձ տայ
տղային. ինդրեմ ինձ լաւ հասկացը-
նես այդ վերն ասած օրինակդ :

Պ: Աիրելի. այսպէս խօսակցուե՛ն
մէջ՝ շաքար կամ մեղր լսած խօսքդ՝

գիտուն և իմաստուն հասկացի՞ր. մեր
 անբախտուն՝ ազգին մերոյ թագաւո-
 րուն բոլորովին վերջացաւ Փրկչի
 թուականին 1399: Ա երջին լւոն թա-
 գաւորն մեր՝ որ մեռաւ ֆուանողի
 յերկիրն՝ Փարեզ Կայսերանիստքա-
 ղաքի մէջն, յայն օրէն մնացինք ազ-
 գով առանց թագաւորի, և առանց
 տերոջ: Ազգերնիս դերի եղաւ. եր-
 կիրներս աւերեցաւ. մեծ հայրերնիս
 ցիր և ցան տաղըլմիշ եղան. դպրա-
 տուն՝ ուսումնարաններն քակվե-
 ցան. կարդալ՝ գրել՝ իմաստասիրուն
 անհետ դայիիպ եղաւ. ասոր համար
 հիմիկվան ժամանակիս՝ շատքիչ գրել
 կարդալ գիտցողք կան մեր ազգին
 մէջն: Եւ այս պատճառովն՝ հիմիկ-
 վան զէնկին՝ խելօք աղայ հայրերս՝
 կարդալ գրելոյ և իմաստուն շաքարի
 մեղրի համն չունենալսերովն՝ խե-
 խրատ կու տան մեզի, թէ քեալն

փողի շատով կը լինի, և ոչ թէ կար-
դաւ գրելով։

Հ. Հիմայ զիս շատ առաւել տա-
րակուսեցուցեր ասելովդ, թէ մեր
հայրերն կարդալ գրել չի գիտնալովն
մեզի խրատ կու տան, քեարն փողի
շատութէնով կը լինի. ուրեմն խնդ-
րեմ հասկացնես ինձի՞ թէ առանց
փողի՝ սալթ մինակ կարդալ գրելով
ինչպէս կարեմք քեար անել, ապ-
րել, և աղեկ մարդ լինիլ։

Պ. Եղբայր պատվական. մարդ
ասած բառն՝ գիտուն փիլիսոփաներն
կենդանի բանական ճանաչերեն. կեն-
դանի ասելով՝ ամենայն թիւուիւ ճա-
նավար գաղաններուն նմանեցուցեր
են. միայն սալթ բանական բառն
աւելցնելով այս կենդանի բառին
վրայ, մարդն շատ ջոկերեն վերի
ճանավար գաղաններեն. և հասուցե-

ըեն մարդուն պատիւն Աստուծուն
պատուն հաւասար զերէ Աստու-
ծու համար կիմանամք թէ աշխար-
հին տառ և եղբն հրամայեաց և հա-
գագագեցան : Խնչակս սաղմոսն կասէ:
բանիւ բերանաց նորու ամենացն զօրուանիւնիք
նորու :

Հապա թէ մարդն բանական է, բան
ասածն յառաջ լսելով կիմացվի, և
ապա խօսելով կը հասկացվի. որպէս և
պօղոս Առաքեալն կասէ թէ հաւագի
՚ե լոյ նն կեցեաբի լսելով կը լլայ
հաւատն. և լուր ՚ե բանին Քաջիպահն
սանքի լսելնալ Քարիստոսի խրատ-
նելն հասկանալով կը լինի :

Ահա իմացար որ՝ մինչեւ կարդալ
գրել չի գիտնայ մարդն, անցած
գնացած բաներն որ տեղէն պետքէ
գիտենալ, որ և ինքն խօսի. պէյլի
է որ՝ թէ չի գիտենայ չի խօսիր. և

թէ չի խօսի՝ բան չի դիմաւլովն չի
խօսիր. թէ բան չի դիտեր՝ բանա-
կան չէ. և թէ բանական չէ՝ ու կը
շարժի և կը քալէ, պաղի պաղի ձայն
հանելով, ուրեմն ճանավար և դաղան
է, և ոչ թէ մարդ. զէրէ ամ դա-
ղանք և անասունք ձայն կը հանեն և
կը շարժին, բայց մարդ չեն :

Հ: Հիմայ խելքս կտրեց՝ որ մարդ
անցած ժամանակի բաներն՝ կարդալ
գրելով կը գիտնայ. իմ սիրտս շատ
ցաւեցաւ վերն ասած բանովդ, թէ
մեր Հայոց ազգի թռադաւորունն
վերջացաւ 1399 թուին. ախ, այդ
ինչպէս եարայ եցաւ ունիմք եղած
բոլոր աղդով մերով, ու մենք տահա-
տեղեակ չեմք՝ և չեմք դիտեր :
Վասոր համար շատ կաղաչեմ հրա-
մանոցդ ինձ հասկացնես, թէ մեր
ասլը կամ սկիզբն ի՞նչ սոյ կամ ցեղ
ազդ եմք եղած. կամ թէ՝ մենքալ

Հիմիկվան երեելի փառաւոր ազդեցուն պէս իշխանութիւն և թագաւորութիւն ունեցած եղեցք, թէ միշտ այսպէս ուրիշ թագաւորներու հրամանի և թօփուղի տակն աննշան պէջլիսիզ մարդիկ եմք եղած :

Պ: Ես այժմ ուրախանալ յոյս ունեցայ որ քու հրամանոց բանականութ միտքն արթնալ ըսկսեց, և այդպէս բաներ իմանալ կը ցանկաս : Ե՞՞ չնորհքդ աւելցնէ . որ սակաւ առ սակաւ ամէն հարկաւոր բաներուն տեղեակ լինիս . ու ապա դու քեզմէն հասկանաս, թէ մարդասածին երկու թև պետքէ, այսինքն՝ ուղղափառ քրիստոնէութ բարի կը թուն ուսումն . որով աղէկ անունով մարդ լինի :

Քայց այս քու խնդրածդ՝ պատմուն տեղեկութիւն ունենալու գործ է

և երկար բան է ամէնն հասկացընել
այս տեղն. մանաւանդ՝ ոյս մեր խօսակ-
ցուե սկսուած պաշտամքը ըն պատ-
մուե համար չէ . այլ միայն գիտե-
նալ ուզեցիր յառաջէն թէ՝ մեզի
ինչպէս բան կայ յաշխարքիս մէջն
աղէկ ապրեցնող, և աղէկ անունով
մարդ ընօղ :

Մենք ալ ասացինք թէ՝ երկու բան
կայ. ուղղափառ քրիստոնէուք բարի
կրթուի : Ու մենակ բարի կրթուե
վրայէն սկսեցինք խօսիլ. հապա պէտք
է յառաջ այս բարի կրթուին իւր
կարգաւ սրայովն լաւ հասկանամք,
և յետոյ քրիստոնէականի, պատմու-
թեան, և այլ հարկաւոր գիտելեաց
սէր տամք՝ ու սորվիմք . եթէ Ած
մեզի շնորհը տայ՝ և այն վախտին
հասցընէ :

Հ: Այդպէս է նէ՝ խնդրեմ միտքս
մտցնես՝ թէ առանց փողի, միայն

կարդալ դըելով մարդս ի՞նչպէս կա-
րէ աղէկ անունով հանդիստ ապրիւ:

Պ: Այս հարցմունքով՝ մեր զէնկին
խելօք գիտցած աղայ պապաներուս՝
չարշըն ղահվէներն խօսակցուեն ար-
ածներուն պէս՝ եօլլու եօլսուզ ինատ
ընել չուզեր . ու շատ աշխատիս
բան չի սորմած մնաս . այլ պէտք է
քեզի՝ միտքդ վրադ հաստատ պահես,
և քու ժամանակիդ մօտիկ տեսած
օրինակներուդ վրայ դատողուեն ընես .
որ նաև շուտ կը հասկանաս , և դու
քեզէն վկայուեն կու տաս թէ՝ շիտակ
է, գըել կարդալով մարդն լաւ կապ-
րի , բանթէ գիր կարդալ չի գիտ
ցող և շատ փող ունեցողըն :

Դ: Պատվելի՛ եղբայր . քու հրա-
մանքն իմ միտքս շատ հետաքրքրուեն
մէջ ձգեցիր , և անհանգիստ է սիրտս,
մինչեւ ասած բաներուդ լաւ տեղե-

կանայ. աղաչեմ և խնդրեմ պէտք
եղած օրինակներով ինձ հասկացուը
որ մեծապէս շնորհակալ կը լինիմ :

Պի. Գրիտե՞ս եղբայր . ասացի թէ
մարդս կենդանի բանական է . բանա-
կան ասելու՝ խօսակցող ասել է . ահա
ես խօրիմ նայ կամեցողութե՞ն , և քու
հրամանքն մտիկ ընելով հասկացի՞ր :

Մէկ երեխայ՝ նոր ծնած ժամա-
նակին իւր մօրմէն՝ թէպէտ զօրութ
բանական է , բայց սերգործութ կա-
րողութ չունենալով խօսելու՝ կատուի
կամ շունի պալայի պէս ձայն մի կը
հանէ . հապա ոչ ինքն գիտէ իւր
ձայնի զօրութն , և ոչ լսողքն կը հաս-
կանան՝ թէ ինչ կուղէ ասել այն
երեխայն , և ինչ աղդի լեզուով կը
խօսի . սակայն քիչ քիչ մեծանալով
զօրութ խուվէթն նամ զգայութեց հաս-
տատվելով , ականջով մարդկանց

Ճայնն լսելով, որ աղջի ճայնն իրեն
շատ որ կը լսվի՝ յառաջ այն լեզուն
կը սորվի. և հայվանուն ջոկվելով,
իւր խօսակցուն անելով ներդործա-
պէս բանական կը լինի. բայց ոմանք
երեխայքալթեպէտ կը մեծնան, կը
լսեն, կիմանան, բայց բնական լեզուի
գորուն մէկ հարկաւոր պակասուն
ունենալով՝ համը տիլսիս կը մնան.
անոնց կըսվի զօրութ բանական. բայց
ներդործութ անբան և անասուն. կեօյ-
աքի՝ ասուն չունեցող :

Հ: Այդ օրինակ նմանունդ բնա-
կան թապիեաթի գործ ըլլալով
միտքս մտաւ, հասկացայ, և աչքե-
րովս ալկը տեսնեմք յաշխարքին մէջն
ծնած երեխայից վերայ, որ շիտակ
է հրամանուցդ ասածն, թէ երե-
խայն յետքէն կը սորվի իւր ինչ աղջ՝
և ինչ լեզուի տիրոջ զաւակ եղածն:
Սակայն տահայ չի կարացի դիտե-

նալ, թէ կարդալ գրելուն օգուտն
ինչ է, որ զմեզ լաւ մարդ կը շինէ.
որ մենք հօրելուս և մօրելուս խօսակ-
ցուքն լեզու ալ սորվեցանք, բա-
նական ալ եղանք, ուրիշ մարդկանց
հետ նստիլ կանգնիլն ալ գիտցանք,
առեւտուքն ալ հասկացանք :

Պ. Ես ալ կը տեսանեմ՝ որ դու
մնուացի տղայ ես, կուզես մէկ բանն
հիմամք և թէմէլով հասկանալ . Հե
մայ նայիր քու ձեռքիդ վերայ, ոք
մէկ արմունկ պիլէկի, կամ մէկ ձեռ-
նիդ վրայ հինգ հատ մատունք կան.
մէկ պօյ և մէկ հաստ ու բարակուք. և
ամէնն մէկ կերպ զօրուք և մարի-
ֆէթով չեն. այլ ամէնն պաշխայ պաշ-
խայ պօյ, թանձրուի, բարակուի,
զօրուի, և հարկաւոր մարիֆէթ
ունին : Հապա այս բոլոր աշխարհիս
մէջն որ անհուն բազմուք զանազան
ազգեր՝ լեզուներ՝ և մարդկանց

ծնօղներ կան . ինչպէս կարե լինել
առանց ուսումնական կրթուե՝ մէկ
մէկի նմանեցնել , բարեկամացուցա-
նել , սիրելի և ընտանի առնել :

Հ: Ուսումնական կրթուե ինչկեր-
պով կարէ օտար ազգ՝ օտար ազգի,
կամ օտար լեզու՝ օտար լեզուի հետ
նմանիլ , բարեկամանալ , և ընտա-
նենալ :

Ա: Խելացի և մոռացի տղայ եռ
դու պէտք էր քեզ այս ասածո՞ ինք-
նիս հասկանայիր : Եհա նայիր լեռ-
ներն բուսած զանազան ծառերուն
վերա . դաշտերն եղած ծաղիկներուն
վերա . որ թէպէտ ծառի կամ ծա-
ղիկի կերպարանքով մէկ մէկի նմա-
նուի ունին , բայց տունի պահանե-
րու ծառոց և ծաղկանց գեղեցկուն
և պատիւ չունենալով վայրենի և
չեօլի ծառ և ծաղիկ կըսվին . և երբ

Ծէրպիյէ անօղ վարպետ պարտիզ-
 պանի ձեռք ընկնին, տեղերիցն կը
 հանէ, տան պահճայի մէջն կը
 տնկէ, պատվաստ և. աշլամայ կանէ,
 միշտ աչքն և ձեռքն վրան լինե-
 լով. Ծէրպիյէ կանէ . յետոյ միւս
 ծառերուն և ծաղիկներուն նոյն պահ-
 ճային մէջ գտվածներուն նմանելով
 միատեսակ գեղեցիկ և ընտանի ծառք
 և ծաղիկը կանուանին : Այսպէս և
 մարդիկ զանազան ծնողաց ծնանելով
 զանազան աննման կրթուի և. բնուի
 կունենան, մէկ մէկի չի նմանած :
 Հապա երբ բարի և լաւ վարժա-
 պետի ձեռք անկանին, Ծէ հարիւր
 այլւ այլ տղայք հասակաւ և բնուի
 լինին, ամենքն մէկ վարժարանի
 կրթուի՝ իբր մէկ բնուի Ծէ և
 որքան օտարք էին, սանքի մէկ հօրէ
 և մէկ մօրէ ծնած եղբարք կը լինին:
 Կարելի է որ մէկ հօրէ և մէկ մօրէ

ծնեալքն երբեմն միմեանց հակառակին . բայց 'ի մի վարժարանի կը թեալքն դժուար ներհակին . թէև պատահի , կրկին փութով հաշտուել միաբանին :

Հ : Ը նորհակալ եմ այս խելքի մօտիկ օրինակիդ , որ վայրենի չեօլի ծառք և ծաղիկք վարպետին ձեռօքն թէրպիել լինելով՝ ըստանի և լաւ կը լինին ասելովդ . խելքս կտրեց , հասկացայ , թէ և մեք տղայքս մեր ծնողաց ձեռօքն և մօտն մնալով՝ եապանի ծառի պէս անկիրթ թէրպիեսիզ կը մնամք . և լաւ վարժապետի ձեռօքն կը պատվաստիմք , կրթեալ և ուսեալ մարդոց կը նմննիմք . բայց տակաւին խելքս չի հասաւ՝ թէ որ աղքատ ծնողաց զաւակ լինիմք , միայն թէրպիես ըլլաներովս ինչպէս լաւ պիտի ապրիմք :

Պ: Փառք այ՝ որ խելքդ հասաւ,
թէ տղայք իւր ծնողաց ձեռքն
կը թուն և թէ բաղիէ չեն աւներ. այլ
լաւ վարպետի ձեռօքն վայրենուն
ընտանի կը լինին : Յոյս ունիմ որ և
լաւ ապրվելուն համար, ասկէ յետոյ
շատ շուտ խելքդ կը համնի պատ-
ճառներն իմանալովդ :

Հ: Հատ կիմնդրեմ պատվելի եղ-
բայր, այդ պատճառներն կարգաւ և
սրայով հասկացնես ինձ, որ միամիտ
լինիմ :

Պ: Ե՞հա այս տեղյառաջ քեզ կե-
մացնեմ հասարակ ամ տղայոց վերայ
թէ զէնկինի՝ և թէ աղքատի. և
ապա յատուկ աղքատի տղայոց լաւ
ապրելուն վրայ կը դրեմ :

Ա Երի օրինակն միտդ բե՛ր՝ թէ
զանազան լեռնե բերած ծառեր և
ծաղիկներն մէկ պարտիզի մէջ անկե-

լով մէկ վարպետի ձեռօքովն, ամէնքն
 ընտանի՝ գեղեցիկ՝ և իբր մէկ սօյ
 մէկ մէկի նման կը լինին : Ա, սոր պէս՝
 զանազան մօրէ ծնեալ մանկունք՝
 մէկ դպրատան մէջ՝ մէկ վարժապե-
 տի ձեռօք կը թվելով՝ ամէնքն սանքի
 մէկ մէկի բնուն՝ խելքի՝ և մոքի
 նմանելով, և երկար ժամանակ մի-
 մեանց հետ գնալ գալով, խաղալ
 խնդալով, սանքի ամէնքն միասիրտ
 սիրով հոդեոր սննդեամք մէկ մօրէ
 ծնեալ եղայր կը լինին նոյն համ-
 շիրակ մանկունք վարժարանին, աղ-
 քատք և հարուստք. այս մանկուն ժա-
 մանակի սիրակցունն համար՝ երբ
 մ ծանան՝ ամէնքն միմեանց հետ թէք-
 լիվսիզ կը լինին . միշտ միմեանց
 խաթրն և պատինն կը պահպանեն :
 Ա, հա այս մէկ վարժարանի պատ-
 ճառով հարիւրաւոր տղայք առանց
 հօրերուն և մօրերուն փողն խարճե-

լոյն՝ մինչև տասնհինդ տարեկան լինին, ամէն մէկն տասն կամ քսան սիրական հաւատարիմբարեկամկեց. աքի եղբայրներ կունենան . և ամէն մէկն ուսեալ թէրպիկէլիք . չէ թէ իւր հօրէն և մօրէ ծնած անկիրթ և թէրպիկսիզ եղբօր պէս. որ միշտ մէկ մէկի սիրտը կը ցաւցընեն. որպէս շատ եղբայրներու օրինակն կը տեսնեմք և կը լսեմք :

Հ: Ճշմարիտ է եղբայր՝ որ տղայըն իւր ծնողաց ձեռքն թէրպիկ չեն լինիլ և շատ եղբարք մէկ մէկի սոր չեն ունենալ. բայց այս բանի պատճառին խելքս չի հասնիր . կաղաչեմինձ սորվեցնես :

Պ: Աի՛րելի. այդ բանն երկու գլխաւոր պատճառ ունի. մէկն այ թոյլատրուեն, ինչպիս հինգ մատն մէկ չափով չէ արել . այդպէսաւ ամ

ծնողք մէկ խելքով և բնուե չէ ստեղ
ծեր . որ աշխարհի կառավարութ
լինի . զէրէ թէ ամ մարդ խելօք
լինէր՝ միայն զիւր օգուտն նայելով՝
ուրիշն Փայտան չէր համսիր . թէ
ամէնն զէնկին լինէին , մէկ մէկի բանն
տեսնող՝ հըզմէթ անօղ չէր գտվեր .
թէ ամ մարդ իշխան և թագաւոր
լինէր , թագաւորաց հրամանն կատա-
րող չէր գտվեր . այսպիս աշխարքն
շինուե և վայելչուե չէր ունենար :

Վնոր համար մէկն մէկալին կա-
րօտ արար Ա.Ճ , որ կամ չի հպար-
տանան , և կամ չի յուսահատին . զէրէ՝
թէ ամէնքն խելօք , զէնկին , իշխան ,
և թագաւորք լինէին՝ հպարտուին
կը տիրէր աշխարքին . թէ ամէնքն
յիմար , տկար , և աղքատ լինէին ,
յուսահատուի և աւերումն կը յառա-
ջանար : Հապա մեծ գթութ՝ բո-
լորն զանազան պատճառներով՝ մէկ

մէկն կարօտ և մէհտաճ՝ արաւ, որ
մէկ զմէկը բռնեն, և ամենեցուն
քարի կառավարուն լինի. փոքրն մե-
ծին, և խելօքին պատվելով զն իւր
օդտին, մեծն և խելօքն աղքատին
ինամք տանի՝ իւր հեղմէթին և հար-
կաւորուն համար :

Հ: Ասացիր՝ թէ երկու պատ-
ճառի հասար. շնորհակալ եմ մէկն
իմացուցիր. հապա մէկալ պատճառն
ինչէ, տղայն իւր ծնողաց մօտ խեր-
պիէ չիլինելուն, և եղբայր եղբօր
հետ կատարեալ սէր չունենալուն :

Պ: Այս երկուսում պատճառն քեզ
լաւ հասկացնել եսալ կամաչես,
և կը վախենամ. քանզի ես ես քեզի
պէս ծնողաց զաւակ եմ. մեք ծնողաց
պակասուն պէտքէ յայտնել, ոք
խելքդ համնի :

Հ: Ասուիս է նէ մինչև հեմայ

աշխարհի մէջ ծնեալ տղայոց անկարդ և անկանոն մեծնալու պատճառք ծնօղքն եղած են. և գիտցօղքն չասելով, շատ տգետ մնացերեն. և նոցա մեղքն կարծեմ, գիտցօղ և չի հասկացնողաց վիզն են. զերէ իմաստնոց խօսք մի կայ, թէ որ գիտէ զմերս բարեկամին՝ և ոչ բժշկեցէ, մեղք են նմա. կամ թէ՝ որ գիտէ բժշկել. և ոչ բժշկեցէ՝ մահ գործէ:

Խնդրեմ այդ երկուսում պատճառալ ինձ լաւ. հասկացուր, որ քու հրամանքդ մեղքեն ազատիս, և մեր ազքն և միտքն բացվին. մեզնէ ետքն եղօղներուն լաւ օրինակ լինիլը. բանզի քու խրատներդ ԱՌ ողորմնւթեն շատ իմ միտքս մնաւ, և հասկացայ :

Պ. Տղային իւր ծնողացմենէ լաւ թէրպիէ չը լինիլն նոյն ծնողաց մահիլուն է պատճառ. Կախ՝ երբ

տղայն հինգ կամ վեց տարեկան լինի,
 իրենց խելքովն որպէս թէ տղային
 վերայ սէր ունին, չուղեն սիրը լիշ
 լինի. կը թողուն դուրսն և սոխախ-
 ներն խաղալու . Ճահիլունիովն ինչ
 որ անէ, խաթրին չեն դիալցիր +
 ուզածն կուտան, կը կերցընեն, կը
 հագցընեն . երես տալով կը սոր-
 վեցնեն . երբ խապահաթ մի անէ,
 թէ մայրն բարկանայ ծեծէ, հայրն
 տիրուն կանէ . և թէ հայրն բար-
 կանայ՝ մայրն չի թողուր . այսպէսով
 տղայն երես կելլէ . և ծնողաց ակ-
 ռայն համրելու գէս՝ երբ որ առաւել
 անկարգուն կանէ տղայն, և ծնօղքն
 շիտակ ծեծէլ կը կամենան, տղայն
 յառաջիններունպէս շախայ դիսնա-
 լով չի փախնար, և չի ամաչեր .
 նոքա ալ բարկուն չափեն ավելի կը
 ծեծեն . տղայն կամ կը սոխատվի,
 և կամ երեսի փերտէն պատռվելով
 անհնաղանդ կը լինի :

Արկուսումնալ տղայն տաճներկու
 տարեկան եղած ժամանակին , իւր
 միտքն կը բացի չարութարին հաս-
 կառալ կը ուխտ այն վախտին ծնօղքն
 խոհեմունի ջունենալով , մարդ ու կին
 տաճն մէջ տղոց առաջն պաղի ձա-
 հելուներ կանեն . տղայքն կը տես-
 նեն . պաղի ղալապալըն կուին կա-
 նեն . նոքա կը լսեն . պաղի հայհո-
 յանք քիւֆիւր կանեն , տղայքն կը
 սորվին . ահա տունն մեծցող երե-
 խայի սորվելու բաներն անոնք են .
 ինչ որ ծնողայնմեննէ տեսան և լսե-
 ցին : Եւ մանաւանդ պաղի հովարտայ-
 ծնօղք՝ որ մշյխանան , դինէտուն , և
 պունկանոց կը բալեն , տղայքն հօ-
 րերուն ետեւէ կը գնան մօրերուն
 խօսքովն տաճն հարկաւոր բան բե-
 րելու , կը տեսնեն իւրեանց հօրե-
 րուն անխելքուն , սօյսուղուն , վաս-
 տակնին նաֆիլէ խարճել ե . կորսնցը

նելն . զիրենք քաղցած չփփլախ պահելն . տուն եկած ժամանակին մօրն հետ արած պօշ կռիւն . և այն տղայի երեսն բացվելով՝ հօրերուն դէմ կը կենան . մէկ մէկ պակասուինն ընեւես երես կը խօսեն . դաւու դրացիսի ծաղը և սասլարայ կը լինիս . այդպէսով սէրելինին ՚ի միմեանց կը պակսի . ահա այսպէս տղայըն թէրպիսիդ կը մնան իւրեանց ծնողաց ձեռքն :

Ճ: Այժմ խօսած բաներովդ աղէկ միտքս հասալ թէ զաւակն իւր ծսող ձեռքն ինչ պատճառով կը թուի և թէրպիկ չի ունենար . և Ճշմարիտ են ամ ասած բաներդ : Ի՞նյց խնդրեմ իմացնես ինձի՝ թէ այդ անխոհեմ կառավարուիքն հասւ բակ ամ մարդու մօտն կը դտվին՝ և է միայն աղքատաց տուներն են այդպէս :

Պ: Ես մինչեւ հիմայ ամ տեսակէ
և սօյ մարդու վերակը խօսէի. այժմ
որ այդ պէս յատուկ հարցմունք արա-
բէր, ինձ պէտք է միմիայն մեր Հայոց
ազգին վերայ խօսիմ . և մեր եղբայր-
ներուն վնաս օդուտն իմացնեմ քեզ-
զէրէ ուրիշ ազգաց մէջ գիտուի և
ուսումն շատ լինելով, նց այսպէտ-
քանի համար բնուիներն շատ հետի-
ն մեզմէ . այսուհետեւ խօսելիքս նց
չի պատկանիր , և ույլիշ չի գար :

Հ: Ուրախ եմ եղբայր՝ որ յատուկ
մեր ազգի որպէսուին կամեցար ինձ
հասկացնելը Հապա մեր ազգին մէջայ
միթէ զանազան բնութենով մարդիկ
չիկան՝ որ լաւ կառավարուի ունենան :

Պ: Թէպէտ ամ ազգի մէջ՝ թէք
թէք անհատ անձինք հազարաւոր
կերպիւ բնուի և թափիեթ ունին,
բայց այսպէս խօսակցուի ընօղ ուսում

նասէր անձինք՝ մէկ ազգին գլխաւոր ույթից եկած գործերուն վերակը խօսին միշտ . և ոչ թէ թէքութիւք մարդկանց հիսապովն . որ այդ անարելի է գտնել և հասկացնել :

* Եմանապէս մեր խօսակցուն հասարակ ազգին վերայ լինելով՝ պէտք է գիտնաս՝ թէ և թագասորուն և իշխանունիս չի մնայ, բայց ողորմութն Առ մինչև ցայժմ չորս թիւուլիւ հասարակուն ունիմք : Այս ջինն օձախզատեազնիւք և հայրենականօք զէնկին հարուստք : Երկրորդն՝ առևտուր փառաւականութ իւրեանց վաստակօքն հարստացեալք : Երրորդն՝ թէպէտ աղքատաց որդիք են, բայց պատվելի մարդկանց ծառայուն անելով, հեմ փող են վաստակած, և հէմ կրթութ թէրպիյէ են եզած : Չորրորդն՝ հասարակ ինքնակիրթք, արհետաւորք, հողագործք, և աղքատք յայտ է թէ՝

և առ այս չորս տեսակ անձինս զանազանք եւս ամ կերպ կառավարուիք :

Հ: Խնդրեմ այս չորս տեսակ անձանց՝ ո՞ր թիւուլւիս վերա էր հրամանոցդ վերն ասա՞ւ Ծերպինսիզ հարց և տղառ զանազանութին, կարգութեալ ինձ հասկացնես :

Պ: Եղբայր սիրելին թէ շրջահայեցուին խալքը կամ երկիւղ քաշել չի անեմք, և շիտակ խօսիլ շիտակ սորվեցնել կամիմք, պետք է ասել թէ բոլոր չորս թիւուլիւի մէջնալ կան զանազան պակասութիք, և զաւակայն մէկ մէկ կերպով անբախտուեն և անկրթուեն պատճառ ըլլալ : Եւ ասոնց ամենուն գլխաւոր պատճառն թագաւորուի չունենալսերովս, հաստատ վարժարան չի գտվելովն, ամ տեսակ անձինք 'ի մէջ կերպ կերպ պակասուեց են և կան :

Աւազին ուժասակ Ա, զնիվքն՝ թէպէտ
 նստիլ կանգնիլ ուտել խմել, մարդ-
 կանց հետ խօնօշմայի, տան՝ զաւա-
 կաց թէրպիյէյի լաւ են, և քիպարձայ
 կը շարժին, բայց սակայն՝ ասոնքաբ
 մէկ պակասուի ունին, որ իւրեանց
 հայրենի լեզուն կարդալ գրել չի
 գիտնալով, ուրիշ ազդաց կարդալ
 գրելն առաւել սորվելով, թէ իրեւ
 թէ իրենց տղայքն այնպէս հասկա-
 ցերեն՝ թէ Հայոց ազգն կամ առանց
 դպրուե քիթապսըզ են, և կամ անը-
 շան գուհիկ մուժիկ ցեղէ յառաջ
 եկեալ են. վայ շատն իրենց խելքովն
 հայերէն. խօսիլն, կամ հայոց ազդ-
 ենք ասելն՝ ամօթէ կը համարիս. թէ
 զարիպ հայ մի գնայ մօտելնին գոր-
 ծիմը համար, եքրահընայ կը խօսին
 հետն, և ուտով քուերիցն տէփ
 անել կը ցանկան ։ յայտ է. թէ՝ այս-
 պիսի ծնողաց զաւակներն ազգասեր

և եղբայրասեր չեն լինիր . Արկրորդ
 տեսակ հայրեցնիս՝ որ վաճառակա-
 նութե հարուստ են, նոքա ալ իւրեանց
 տուն՝ տղայքն ըստով ատեպով կը
 կառավարեն . պարկեշտ նստիլ կանգ-
 նիլ մարդավարութե խօսիլ գիտեն .
 ամայ վարժարանի մէջ չի կըթվելով,
 քեօշէ քեօշէ աէրտերի՝ տիրացուի
 քով քիչ մի կարդալ գրելթէ ֆակեր
 սորմելով . որ յետոյ փող վաստակեր
 են կամ հօրերուն միրասովն զէն-
 կին մնացերեն , պատմուեց և Վա-
 յին գրեանց զօրուեն տեղեակ չի-
 լինելով , մէկ ծածուկ տղիսութ-
 դուսզուին և հպարտուին մի մաերե-
 քնուիներուն մէջ , և խե ատելուին մի
 ունին գիտուեն և ուտան վրայ . որ
 չեն կարեր ծածկեալ պահել . երբ
 ուսման գովասանուին ընօղ պատահի ,
 շուտով կառեն՝ թէ շատ կարդալ
 գրելն մարդու հայ չի տար . աշխարքի

փառք պատիւն՝ փարայ շատ ունեցողիս է . այս խօսքով յաւաջ իւրեանց որդւոց սիրան ուլ պաղեցան կարդալ գրելէն . ապա ուրիշներուն գլխին զարքածիպէս՝ մտքերսին կըքեօռացնեն , և վազ բերել կուտան . և այն ողորմելիքն հայրենի կայք չունին . կարդալ գրելու լաւն չեն սորվեր՝ որ խելքով իւրեանց ապրուստն գտնեն . նաշար մնալով՝ այն ուսումն չի սիրող աղաներուն դուռն երկար ժամանակ հիզմէթքեարուն կեանքերնին կանցնեն . երբ պատահի թէ աղայն՝ և թէ հիզմէթքեարն ուսեալ աղդաց վաճառականներն ոփակված կը մնայ . յետոյ նց խելքն կը գովեն , ասելով . շատ խելօք պազիրկեան աղայ մարդ է : Երեքում կարդ մարդիկըն , որ հիզմէթքեարուն յառաջ եկած աղայ եղած են , անոնց շատն իրենց միրաս

Ետի աղաներէն իսելօք են : Այսու-
հառն . թէպէտ մէկ կամ երկու չօր-
պաճէյի հեղմէթ արին , բայց այնքան
ժամասակ իրենց չօրպաճէյի առևտու-
թի գործովն՝ շատ ուրիշ չօրպաճէ-
ներու հետ բան ունեցան . խօսակ-
ցուի արին . իսելք մարիֆէթ սոր-
վեցան . հապա լաւ կարդալ գրել չի
գիտենալով նք ալ չօլախ և թօփալ
են . ուղ թէ մէկ զանատով թուզուն
են , որ չեն կարել թուչիլ :

Եւ պազիներնալ թէև նրբան հեղ-
մէթ արած՝ լաւ մարդիկ աեսածեն,
իրենք հայլազ լինելով որբան գէշ
բան տեսերեն՝ անոնք սորված են.
աղէկ բաներուն հոգս արած սէր
չեն ավեր , և չեն սորվեր . միայն
իրենց գէշ կողմէ սորվածներովն ,
չարշը մէյհանաներ և դահվէներն
չենլէթ միշ կընեն . ժամասկով աղա-
ներուն տունն աեսած գէշ բաներն

պատմելով՝ հալսին էնկլէնտիրմիշ
 կընեն. սանքի աղաներէն կերած հա-
 ցերուն փոխարէնն կը վճարեն. Ա. հա-
 յսպիսի անձանց զաւակներն՝ իրենց-
 մի ինչ որ լսեն՝ և տեսնեն, շատն
 այնպէս կը լինին. և շատն տահայ
 ավելի հայլաղ և պօշտողազ. օրէնք
 պատվիրանք չեն գիտեր. ծերոց և
 պատվելեաց յարգանք իքրամ չեն
 աներ. ծնողաց սէր չեն ուսենար.
 ածպաշտուե ձանապարհ չեն սորված.
 թէ հինգ տասն կոպէկ ունին, կի-
 մանան թէ իրենցմիշ լաւ խելօք մարդ
 չիկայ. ոպ առէ հասարակաց առակն.
 չինչենէրէն նակչն օլո՞ն՝ ճամբյի ելքար
 ոէնէլէն. հալտէլդառն դարն օլո՞ն՝ հէ-
 մանը ելքար նաև իլէն : Այսպէս նամ
 մարդ առանց մանկական ժամանա-
 կին ուսման և գիտուե կերպ կերպ
 պակասուիներ կունենայ :

Չորսում կարդ մարդկանց համար

պիտիր խօսիմ. բայց գիտեմ որ հեմայ քու մոքեդ կանցնի թէ՝ երբ վերն ասած երեք կարգ մարդկանց՝ և իւրեանց զաւակացնմենէ կատարեալ աղէկուն չերևեցաւ և չի լսեցի, այս չորսում կարդի՝ էսնաֆ, հողագործ, և աղքատ մարդկանցմենէ ինչ լաւուն՝ և ինչ աղքաօդուտ բաներ կը ընայ յառաջ գալ և լսվիլ:

Դրաւի եղբայր. մարդկօրէն դատողունք խելքի մօտ է այդ մտածմունքդ. և շատնալշիտակ է. բայց Այս կամեցողունքն՝ մեր խելքէն դուրս բաներ շատ եղած են. և միշտ անպակաս կը լինին 'ի մէջ աշխարհիս:

Կախ՝ մարդարէներուն շատն աղքատ և աղքատի որդիք էին. Դրաւիթ մարդարէն չօպան էր. հայոց աղգէն Ստամպոլու Մօրիկ կայսրն պահճապանի որդի էր. Վհան տըն մեր՝ ըս-

մարմնոյ ծննդեան՝ աղքատ որբ Առա-
 րիամ սբ կուսի զաւակն էր . Առա-
 քելոց շատն աղքատ պալխճի էին .
 թէպէտ Պօղոս առաքեալն երևելի
 մարդու զաւակ էր , բայց և ինքն
 գիտելով թէ առ Ա.Ճ. աղքատն
 առաւել պատվառը է , ինքնին վկայ-
 եաց և ասաց . զաղցափո և զանահնո
 չնարդեաց Ա.Ճ. , զի զէտն ինն խախտնեացէ :
 Թաէ լաւ նայիմք՝ երևելի սբզն
 Նայրապետաց շատն աղքատ և աղ-
 քատաց որդիք էին . որ բոլոր բրիս-
 տոնէից՝ կարդ , կանոն , և նի-
 զամ սորվեցուցին : Եւ հիմիկվան
 աղդերուս մէջ գտիօղ կարդացօղ ,
 գիտուն , վարդապետ , քահանայ , վար-
 ժապետք , շատն աղքատաց որդիք են :
 Ա.Հա այս յայտնի օրինակներովնյայտ-
 նի եղաւ՝ որ մարդու գիտցած դա-
 տողուին՝ Ա.Ճ ընտրած և սահմանա-
 ձէն շատ հեռի են : Ուսում գի-

տուին՝ շատ աննշան մարդիկներ եր-
և լի արերէ . տղիտուին՝ շատ եր-
և լի մարդկանց զաւակներ հացէ
կարօտ թողերէ :

Հ: Աեծապէս շնորհակալեմ եղ-
բայր . լաւ միտքս մնաւ և հասկա-
ցայ , թէ ճշմարիտ մարդուս լաւ
ապրվելու , և աղէկ անունով մարդ
լինելու 'ի մէջ աշխարհի՝ կարդալ
գրելն է հարկաւոր . և ունիմ փա-
փաք Ի՞՛ շնորհօքն սորվելու . անոր
համար խնդրեմ ինձ իմացնես՝ թէ
քանի՞ գերք կայ մեղ աշխարհակա-
նացս կարդալու , որ աղէկ գրել և
կարդալ սորվիմք :

Պ: Կատարեալ կարդալն և իմաս-
տասիրուին ովկիանոս անհուն ծով
մի է . մարդս թէ հազար տարի
ապրի՝ և միշտ կարդալ գրելու ետեկ
լինի . կէնէ կատարեալ չի սորված

կը մեռնի: Աակայն իմ ասած կարդալ
գրելն՝ առ հասարակ ամէն տղայի
օգտակարն՝ թէ մոտացի տղայ լինի՝
վեց տարեկանէն սկսէ մինչև ՚ի տասն-
եհինգ տարին կարդայ, երեն ձեռք
կու տայ:

*Հ*որա կարդալու հարկաւոր գը-
քերն զկնի գրավարժուն՝ լաւ վար-
պետի մօտ՝ քերականութիւն է . թէ
առաւել սէր ունենայ՝ Ճարտասա-
նուի և տրամաբանութիւն ալ կարդայ,
մինչի քսան տարեկան լինի՝ այս երեքն
լաւ կարէ սորվիլ . այս երեք ար-
հեսան սորվելէն յետոյ՝ քանի որ
կենդանի է՝ իւր հացն և պատիւն
չի պակսիր . և զկնի մահուանն եր-
կար ժամանակ ալ անունն հասարա-
կուն մէջ կը խօսվի . զաւակաց և
ընտանեացն լնամք կընես դիտցողք
և Ճանաչօղքն իւր:

Հարցութիւն ՚է ՎԵՌ Ա-ՂՂԱՔԻ Ա-ՐԵՎԵԿՈՒ-
ՆԽԱՀԱՆ Ա-ԱԾԹԱԿ :

ՀՅ Շ ատ մեծապէս շնորհակալեմ
Եղբայր սիրելի և պատվական, որ
շատ խելքի մօտիկ օրինակներովդ՝
և բարի խրատներովդ՝ ինձ հասկա-
ցուցեր աշխարհի վեր լաւ ապրվելու՝
և բարի անունով մարդ ըլլալու
կերպն . և իմ խելքու լաւ պառկե-
ցաւ՝ թէ առանց լաւ վարժապետի
ձեռօք կարդալ և գրել չի սորված
տղայն՝ հայվան և անասուն կը մ-
ծանայ . և շատնալ՝ թէ հօրմէն բարի
անուն մնացերէր՝ այսալ կը կրու-
սանէ : Ե՞սոր համար Ե՞Ռ շնորհօքն
կաշխատիմ և կը ցանկամ այս վար-
ժարանի մէջ սորվիլ իմ կարողունու
չափ կարդալ և գրել :

Բայց հրամանքդ յառաջն խոստա-
ցար երկու հարկաւոր բան ինձ սոր-

վեցնել. և մինչեւ հիմայ չասիր՝ թէ
ինչ է ուղղափառ քրիստոնեութն, և
քանի հարկաւոր սորվելիք ունի. որև
իմ այնալ սորվելովս՝ ասածիդ պէս
երկու թէ ունենայի. մեծապէս
խնդրեմ և զքրիստոնեութն ուսուցա-
նես ինձ :

Պ: Ե՞՞ Ճ շնորհքդ ավելցնէ եղբայր,
որ միշտ այդպէս ածահաջոյ լաւ և
օդտակար բանից սէր ունենաս, հարց-
նես՝ իմանաս, և անոնցմով այր
քարի և կատարեալ լինիս :

Սակայն այս հիմիկվան քո հրամանոց
հարցվածն շատ մեծ և հարկաւոր բան
է ամ քրիստոնեայ եղող մարդկանց .
այդ բանն՝ հիշ մէկ վարդապէտ կամ
վարժապէտ իւր խելքովն չի կարեր
